ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 16 » 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000023

Ձեռնարկողը՝ ***«Նորշին» ՍՊԸ***
Ք. Երևան, Նորաշեն 23/10

Գործունեությունը՝ ***Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան փողոց 41/3 և 41/3 շենք հ.1 հասցեներում արտադրական շենքը բնակելի վերակառուցման և նոր բազմաբնակարան մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաքի

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000023

< 16 > 03 2020թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան փողոց 41/3 և 41/3 շենք հ.1 հասցեներում արտադրական շենքը բնակելի վերակառուցման և նոր բազմաբնակարան մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Նորշին» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

«Նորշին» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան փողոց 41/3 և 41/3 շենք հ.1 հասցեներում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի շենքեր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 0.65207հա (սեփականատեր «Նորշին» ՍՊԸ) և 0.5046հա (սեփականատերեր Գագիկ Վարդանի Շաղոյան, Լևոն Արսենի Օհանյան) մակերեսներով հողամասերում, որոնց նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման՝ ըստ ճարտարապետահատակագծային առաջարանքի:

Նկարագրական մաս. Տարածքի հարևանությամբ են գտնվում Մանանդյան և Չեխովի փողոցները, 14.6մետր հեռավորության վրա առկա է մարզադաշտ, 26.5-39մետր հեռավորության վրա՝ արդյունաբերական նշանակության հողամասեր:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը նախկինում եղել է արտադրական նշանակության տարածք: Տարածքում առկա է խճա-մանրախճային և կավավազային կազմով լիցքային գրունտ, որի հզորությունը կազմում է 0.3-1.0մետր: Տարածքում բացակայում է բուսահողը, ծառաթփային բուսականությունը: Պատմամշակութային հուշարձաններ չկան:

Տարածքում առկա են շինություններ՝ 10 հարկանի արտադրական շինություն, որը վերակառուցվելու է բնակելիի, քանդման ենթակա մեկ վերգետնյա և մեկ կիսանկուղային հարկով՝ 2.186,6քմ (ճաշարան), 288քմ օժանդակ շինություն, որոնք ապամոնտաժվելու և քանդվելու են: Կառուցվելու է կիսանկուղով, տասներկու հարկանի բազմաբնակարան բնակելի շենք: Շենքն իրենից ներկայացնելու է AI 451 ԿՊ-1ո/12 տիպարային եռամուտք շինություն, որն

ունի ուղղանկյունաձև տեսք: Նախագծվել է նաև նոր տասներկու հարկանի կիսանկուղով բազմաբնակարան բնակելի շենք, որը նույնպես AI 451 ԿՊ-1ո/12 տիպարային շինություն է, երկու մուտքով, ուղղանկյունաձև տեսքով:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառույցներին և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես - 1.1566,7հա

Կառուցապատման մակերես - 3.420քմ

Կանաչապատման մակերես - 1.231քմ

Մայթեր, ճեմուղիներ, ասֆալտապատում - 6.916քմ

Բնակարանների ընդհանուր թիվը - 493

Վերգետնյա ավտոկայանատեղերի քանակը - 350(ստորգետնյա ավտոկայանատեղեր չի նախատեսվել):

Բնակելի շենքերի էլեկտրամատակարարումը կիրականացվի «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի հիման վրա, իսկ ջերմամատակարարումը նախատեսվում է անհատական էլեկտրական սարքերով:

Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 750 օր:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (100 մարդ) և կազմել 1.740մ^3/շին.ժամ կամ 2.32մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 337.5մ^3/շին.ժամ կամ 0.75մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2077.5մ^3/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 6.300մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 3.550մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 2.750մ^3 կօգտագործվի որպես հետլիցք, բարեկարգման և կանաչապատման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային աղբն է՝ 2.500կգ և շինարարական աղբը՝ 350մ^3: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքների/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա տաք ամիսներին՝ օրական 2-3 անգամ,

– ջրցանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Նորշին» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան փողոց 41/3 և 41/3 շենք հ.1 հասցեում նախատեսվող երկու բազմաֆունկցիոնալ բնակելի մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Ալեքսանյան